

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Պետական (մունիցիպալ) գնումների իրականացման ժամանակ բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝
անդամ պետություններ,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի
մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթների վրա,

շահագրգռված լինելով երկարաժամկետ եւ կայուն հիմունքով պետական
(մունիցիպալ) գնումների ոլորտում համագործակցությունն ամրապնդելու
հարցում,

կիսելով հնարավոր մատակարարների եւ մեկ անդամ պետության
տարածքում գրանցված մատակարարների համար այլ անդամ պետությունում
անցկացվող պետական (մունիցիպալ) գնումներին մասնակցությանն անարգել
հասանելիություն ապահովելու ձգտումը,

հիմնվելով իրավահավասարության եւ փոխշահավետության սկզբունքների
վրա՝ հաշվի առնելով անդամ պետությունների տնտեսական շահերը,

հաշվի առնելով պետական (մունիցիպալ) գնումների իրականացման
ժամանակ պատվիրատուների իրավունքների պատշաճ պաշտպանության
անհրաժեշտությունը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը.

բանկային երաշխիք՝ պրինցիպալի անդամ պետության տարածքում գրանցված՝ երաշխիք տված անձի կողմից տրված երաշխիք (անկախ երաշխիք)՝ պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունների ապահովման համար.

բենեֆիցիար՝ պատվիրատու, հոգուտ որի տրվել է բանկային երաշխիքը.

պրինցիպալ՝ հնարավոր մատակարար կամ մատակարար, որին տրամադրվել է բանկային երաշխիքը.

բանկային երաշխիքների ռեեստր՝ բենեֆիցիարի անդամ պետության ռեեստր, որը պարունակում է տրված բանկային երաշխիքների մասին պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվությունը:

Սույն համաձայնագրում օգտագործվող մյուս հասկացությունները կիրառվում են Պայմանագրով եւ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

Հոդված 2

Սույն համաձայնագրի առարկան այն բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման ապահովումն է, որոնք տրվում են պրինցիպալի անդամ պետության տարածքում գրանցված՝ երաշխիք տված անձանց կողմից՝ այլ անդամ պետության բենեֆիցիարի կողմից իրականացվող պետական (մունիցիպալ) գնումների նպատակներով:

Բանկային երաշխիքները, որոնք տրվել են՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի դրույթները, անդամ պետությունների կողմից ճանաչվում են պետական (մունիցիպալ) գնումների իրականացման ժամանակ:

Սույն համաձայնագրի գործողությունը չի տարածվում՝

այն պետական (մունիցիպալ) գնումների վրա, որոնց մասին տեղեկությունները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պետական գաղտնիք (գաղտնիքներ) են կազմում.

անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի կողմից իրականացվող գնումների վրա:

Հոդված 3

Երաշխիք տված անձը, որը գրանցված է պրինցիպալի անդամ պետության տարածքում, այդ անդամ պետության օրենսդրության համաձայն պետք է լինի բանկ եւ պետք է համապատասխանի հետեւյալ պահանջներին.

պրինցիպալի անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ երաշխիք տված անձի նկատմամբ՝ նրա տնտեսական անվճարունակության (սնանկության) կանխարգելման եւ ֆինանսական վիճակի բարելավման (ֆինանսական առողջացման) համար կիրառված միջոցների բացակայություն վերջին 6 ամիսների ընթացքում.

եթե բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված է վարկային վարկանիշի առկայության մասին պահանջ, ապա բենեֆիցիարի անդամ պետության վարկային վարկանիշային գործակալության կողմից շնորհված այնպիսի վարկային վարկանիշի առկայություն, որի մակարդակին ներկայացվող պահանջը նախատեսված է բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ, կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) խորհրդի կողմից հաստատված չափանիշներին համապատասխանություն:

Հոդված 4

1. Պրինցիպալի անդամ պետության տարածքում գրանցված եւ սույն

համաձայնագրի 3-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանող՝ երաշխիք տված անձն այլ անդամ պետության բենեֆիցիարի պետական (մունիցիպալ) գնումներին մասնակցության համար բանկային երաշխիքի տրման նպատակով պետք է ներառվի բենեֆիցիարի անդամ պետության՝ երաշխիք տված անձանց ցանկում (այսուհետ՝ երաշխիք տված անձանց ցանկ), եթե պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված է այդպիսի ցանկի ձեւավորում: Երաշխիք տված անձանց ցանկում երաշխիք տված անձանց ներառելու նպատակներով պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ երաշխիք տված անձանց ներկայացվող՝ սույն համաձայնագրով չնախատեսված պահանջների սահմանում չի թույլատրվում:

Երաշխիք տված անձանց ցանկում ներառելն իրականացվում է պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ այն տեղեկատվության հիման վրա, որը բենեֆիցիարի անդամ պետության լիազորված մարմինն ստացել է պրինցիպալի անդամ պետության լիազորված մարմնից:

2. Երաշխիք տված անձը հանվում է երաշխիք տված անձանց ցանկից պրինցիպալի անդամ պետության լիազորված մարմնի տեղեկատվության հիման վրա՝ հետեւյալ դեպքերում.

սույն համաձայնագրի պահանջներին երաշխիք տված անձի չհամապատասխանելը,

երաշխիք տված անձանց ցանկից հանելու մասին երաշխիք տված անձի կողմից գրավոր դիմում ներկայացվելը:

3. Երաշխիք տված անձին երաշխիք տված անձանց ցանկից հանելը չի դադարեցնում նրա կողմից տրված եւ բենեֆիցիարի կողմից ընդունված

բանկային երաշխիքների գործողությունը եւ երաշխիք տված անձին չի ազատում այդ բանկային երաշխիքների գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունից:

4. Սույն հոդվածով նախատեսված տեղեկատվության կազմը, ինչպես նաեւ այդպիսի տեղեկատվության փոխանակման կարգը սահմանվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից:

Հոդված 5

Բանկային երաշխիքի ձեւն ու բովանդակությունը պետք է համապատասխանեն բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրության պահանջներին: Բանկային երաշխիքը պետք է ներառվի բանկային երաշխիքների ռեեստրում՝ պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով (եթե այդ օրենսդրությամբ նախատեսված է նշված ռեեստրի ձեւավորում):

Բենեֆիցիարի կողմից՝ երաշխիք տված անձին բանկային երաշխիքի մասով պահանջի ներկայացման, երաշխիք տված անձի կողմից դրա ուսումնասիրման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությունը:

Հոդված 6

Բենեֆիցիարի եւ երաշխիք տված անձի, ինչպես նաեւ բենեֆիցիարի եւ պրինցիպալի միջեւ վեճերը քննվում են դատական կարգով՝ ըստ բենեֆիցիարի գրանցման վայրի, բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 7

Անդամ պետությունները սահմանում են սույն համաձայնագրի

իրականացման համար պատասխանատու լիազորված մարմիններ, ինչի մասին Հանձնաժողովին տեղեկացնում են սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցելու հետ միաժամանակ:

Հոդված 8

Անդամ պետությունների կողմից սույն համաձայնագրի իրականացման ժամանակ անդամ պետություններն ինքնուրույն են կրում, ի թիվս այլոց, երաշխիք տված անձանց ցանկի եւ բանկային երաշխիքների ռեեստրի ստեղծման եւ (կամ) վարման եւ (կամ) արդիականացման հետ կապված ծախսերը:

Հոդված 9

Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեակերպվում են առանձին արձանագրություններով եւ սույն համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 10

Սույն համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են Պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 11

Սույն համաձայնագիրը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ ընդգրկվում է Եվրասիական տնտեսական միության իրավունքի կազմում:

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ

մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2023 թվականի օգոստոսի «29»-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերեն:

Սույն համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>	Բելառուսի Հանրապետության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>	Ղազախստանի Հանրապետության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>	Ղրղզական Հանրապետության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>	Ռուսաստանի Դաշնության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>
---	---	--	--	--

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023թ. օգոստոսի 29-ին քաղաք
Մոսկվայում ստորագրված՝ «Պետական (մունիցիպալ) գնումների իրականացման
ժամանակ բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրի
հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**